

տերուն հայրիկին նման, երած շալակը չորս մարդերու ու ա՛լ չդարձած, ճիշդ ինչպէս էր պատահածը իմ հօրը, որուն հիւանդ պատկերը չունիմ մտքիս մէջ քանդակ-լած, բայց ունիմ դազաղ մտնելու տեսարանը, չորս մարդոց շալակը ելլելու միւս տեսարանը մօրս բոպիկ ճոռոցին մէջ, երբ զիս կը ձգէր ինծի տարեկից աղջկան մը իննամ-քին ու անձրեւախառն ձիւնին տակ կ'ըլլար աներեւոյթ աչքերէս: Ի՛նչ անուշիկ աղջիկ էր այդ պուպրիկը, որուն գոգնոցին գրպաններուն շաքար ու նուշ ու սուղ չորեղէնները, չամիչէն ու արմաւէն սկսեալ, պարպելով գանոնք իմ ապշահար ուրախութեանս: Ու խաղ ու խնդուք: Պէտք պիտի ըլլային սա եղերական, անդարմանելի տեսարանները, որպէսզի իմ անօթի երեսներու քիչիկ մը ժպիտ բացուէր: Հէ՛յ աշխարհ: Քեզ ո՞վ է շիներ այսպէս անիրաւ: Հիմա կը զգամ զիս այն անհուն կսկիծին մէջ, որ այդ օրուան գիշերը կը սկսէր, երբ սպառած անուշն ու կուշտ, գրկուած հարուստին այդ աղջկան սփոփիչ ներկայութենէն, մութէն վախցած ու տակաւին այցուած աւելի մութ բաներէ՝ ուզեցի յամառ ու անգութ լացով մը ուշացած պապան, բզկտելով ինքզինքս ու բզկտելով սիրտերը մամաս շրջապատողներուն, հանրմներ, հասուն աղջիկներ, մանարանին տէրը, տղաքը, պուպրիկը, որոնք իրենց ապարանքէն վազեր էին մեր հիւղակը լացէս սարսափած, նուաղած ինկող մամաս սթափեցնելու եւ համբոյրով փակելու վշտին մանրիկ, բայց անգուսպ փողրակները... իմ բերնին: Ողջերուն համար մահը դաժան են ըսեր ու անցեր: Մահը ամէնէն խոր փորձառութիւնն է կեանքին, պայմանով, որ ասացուածէն զեղչուի բաժինը կրօնքներով, գրականութիւններով, արուեստներով անոր ներսը զետեղուած հասարակ տեղիքէն: Զայն կ'ապրինք անշուշտ քիչ մը ամէն օր եւ ամէն տեղ: Բայց շատ քիչերու վիճակուած է ճակատ ճակատի կենալ անոր հետ: Մահը դառնագոյն փորձառութիւնն է, որուն քուրայէն անցնող ողջն է միայն, որ կը հասկնայ անոր ահաւոր ստեղծուածը: Ոչ մէկ բնագանցական շահաբերում սա տողերուն ետին: